

ԻՆՉՊԵ՞Ս ՃՈՆՉՑՈՅՑ ԵՎԻՇԵ ՊԱՏՐԵՒՄՔԸ

Անցեալի փոշեթաթախ յուշերէս թարամացեալ, հոգիս թարիչք կ'առնէ սաւտանող արծուի նման շատ տարիներ առաջ՝ 1980

Փետրուար, Պիքֆայայի բարձունքին թառած Մեծի Տանն կիրկիոյ Դպրեվանքը:

Իրիկուն մըն էր երր անոնկնալորէն լուսեցաւ վարժարանքին զանգին ձայնը:

Սովորական ժամը չէր: Հաւաքուեցանք Դպրեվանքի մուտքին, մեր առջև երեսցան տեսչական կազմը և մի ալեւոր մօրուսվ, սպիտակ մազերով վեհոտեսիլ անձ մը, զոր առաջին անգամ էր որ կը տեսնէինք: Տեսուչ Սրբազնը, ծանօթացնելով գոյն մեզի՝ ըստը: Շնորհիս ենք այսօր այցիլու ունենալու երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռոյն Պատրիարք Տ. Եղիշէ Արքական:

Տէրաքրիստոնը և աւել ցուց: «Եղիշիարդը»: Մանօթ էր ան մեզ իր գրչով, նոխօրեակին՝ արտասանական մրցանքի մը մէջ առաջնութիւնը կ'առնէր իր գլուխ գործոցը եղող Շոտարականը ըստին Հայր Աները: Բոլորին հրճուանքը մեծ էր, որովհետեւ դէմ յանդիման կը գտնուէին վերջին կիսադարուն մեծագոյն հայ գրչի և բամի վաստակաւորներէն մէկուն հետո:

Տարիներ ասնեցան: 1985 Հոկտեմբերի Այս անգամ բախտը կ'ունենայի ընդունուելու երուսաղէմի Ս. Յակոբեանց Ընծայարանի և Ժամանակակից մարդարանի յարեէն ներս և ըլլալու այս դարաւոր սուրբ համատառութեան ժառանգորդներէն մին:

Կարճ ժամանակաշրջանէ մը ետք, բախտաւորութիւնը պիտի ունենայի աշակերտելու բանասեղծ Պատրիարքին, որ մեզի պիտի առանգէր Քարոզիսութեան, Ընդհանութեր եկեղեցւոյ Պատմաւթեան և Հայ Գրականութեան զաները:

Աքսորական՝ Վանի գիւղերէն, Մեծ Եղեռնի ջարդէն վերապրողներէն պատանի Եղիոզոր կը անէր Դուրեանի շունչով, կ'առնէր առաջնորդաւոր այդ բանսատեղծին հոգանիին ներքեւ: Սրբազն քերթողը, տեսնելով անոր տաղանդը, մեծապէս քաջակերեց չնորհալի պատանին, տրամադրելով անոր իր անձնական մատենագա-

րանը, ինչպէս սովոր էր երանաշնորհ Սրբազնը ըսել իր դասաւանդութեանց ընթացքին:

Զենադրուեցաւ Սարկաւագ Դուրեանի յորդորումներով, բայց տւա՞զ, չուտով բաժնուեցաւ այս մեծ սսկերերանը այս աշխարհէն, բայց պիտի յաջորդէր անոր Թորգոմ Պատրիարք, կրկին Օրմանեանի և Դուրեանի գրագէտ աշակերտներէն մին: Այս վերջինը մեծապէս պիտի ազգէր իր հոգիին և պիտի ըլլար իր մատրիպորը, բանալով Հայր Եղիշէի միտքն ու հոգին մեր ցեղի մեծ արժէքներուն և սխրալի իրագործումներուն:

Գուշտականի զուգընթաց, գրագէտ Յակոպ Օշականի ազգեցութիւնն ալ մեծ եղաւ իր գրական նկարագրի կերտումին մէջ, բանալով հայ դպրութեան գողտնիքները անոր հոգիին ու մտքին:

Իրեւ հայ կղերական, երբեք չխնայեց մտրակելու մեր հաւատքի քանդիչները, ինչպէս Աղամանեան ու կողեան (տեսնել ՇԱՆԴՐԱՊԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ խորագիրը կրող իր գրքոյնկները): Իր գրիշը մեծագոյն նուաճումներ ըրտւ երր խնդրոյ առարկայ կը դառնար Հայ Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը:

Այժմ, աստած գրասենեակիս առջև, կը զգամ շուրջս խորունկ պարապը՝ իր բացակայութեամբ գոյացած: Կը յիշեմ անցեալի երանելի դաստականները, երր իր մօտ կը բարձրանայինք, կը զգայինք հօր մը մտակութիւնը, աւելի քան ուռուցչի կամ Պատրիարքի: Կը ներշնչուէինք իր բանաստեղծական շունչով և հաղորդուկց կ'ըլլայինք իր հոգեկան թորիչքներուն:

Իր սրտին շատ մօտիկ էր նեցուկ կանգնիլ մեր գրական աշխատանքներուն: Մեզ կը քաջաւերէր ըսելով: «Զեմ փափառքիր ձեզ մէյմէկ գրագէտներու վերածել, բայց կ'ուզեմ որ իրեւ հայորդինք գիտնաք գրել մեր լեզուն, մշակոյթն ու պատմութիւնը: Դուք էք մեր յաջորդները, յայուը և ներշնչումը ապագայինք: Մասնաւորապէս կը մատնաշէր պակասը հայ գրական ու հոգեոր մշակին:

ՄՐՏԻ ՏԵՐ ՄԱՐԴԸ ԵՂԻՎԱՐԴ

ՆԵՐ ԵՆԾԵԼ Եւ ԱՅՏ ԻՄ ԱՐՔՈՒ ԿԱՅ,

Աստուածաշնչական այս խօսքը, "Ո՞ր բնաբանն է Եղիվարդի բանաստեղծական հատորներէն մէկուն" (Անցորդը), խորապէս կը բնորոշէ նաև Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի Նկարագրին կարեւոր մէկ յատկանիշը՝ իր սրտի տէր մարդ մը եղած ըլլութը, Մէկը, որ դիտէր սրտէն տալու Մոքէն տառջ իր սիրտն է որ կը բարախէր, Հոգիկան զգայնութիւնները աւելի ծանր կը հշուէին իր արարքներուն և դատումներուն մէջ քան մարդկային թուաբուածին հաշիւնները:

— Ես կը քննամ բայց սիրու արթուն է:

Ու բայց անոնք որ Եղիշէ Սրբազնը ճանչցեր էին մատէն՝ իր մտերյութեանը մէջ, կրնան վկայել որ իր սիրտը միշտ մասց արթուն և հոգից իր ստանձնած բուլոր պաշտօններուն և պատասխանատըռութեանց վրայ:

Նաև իր սիրտն էր որ կը խօսէր իր բոլոր գործերուն մէջ, յիշեցնելով մեզի ժողովրդական հին և իմաստուն վկայութիւն մը:

— Սիրոս խօսեցաւ:

Ան եղաւ իսկական ռւսաւցիշը, դաստուն բարի ու համբերող: Սորվեցուց իր իւրայատուկ կարագով՝ Ռւսուցանելու չնորհը բնածին էր իր մէջ: Դրեց Եղիվարդեան նար միտքով, Մտեղծադորեց և տուաւ մեզի իր գրիշով և Մագդալինէն (Մեղրամամէշ), և Սուրբ Մեսրոպ, և Կարծիր Զօրավար, և Օսարականը, և Հուսամատեանն, և Հուսաւորիշը և այլ գործեր, որոնք գրաւեցին իրենց ուրոյն տեղը հայ գրականութեան մէջ:

Եփջաւ այս աստղը 1 Փետր. 1990 ին, երբ գիշերը իջած էր խորտակուած ու վրանի մը պէս, սուգ սփռելով ողջ Սաղմանայութեան և Սփիւռքի տարածքին, և Երանի որ ունիցի յիշատակի ի Սիրոն:

ՄԱՏԹԵՈՍ Սրբ. ԻՓՐԱՃԵԱՆ
27 Մարտ 1990 — Խուսակէմ

Սրտի տէր մարդ մը ըլլալու իր այս յատկանիշը իր անձին մէջ երեք հիմնական գիծներով է որ կը յայտնաւի:

1. Նուրիբումի անձը,

2. Մարդը,

3. Բանաստեղծը:

Նուրիբումի անձը

Ամենէն շատ և ամենէն աւելի Եղիշէ Սրբազն իր սիրտը տուած էր մեր Եկեղեցին, որուն ծառայութիւնն ու նուրիբումը կազմեց իր մեծագոյն փառքը:

Վասպուրականի մէջ ծնած (Կայսիմիրան) և տղայ տարիքին որբացած՝ աշքը բացաւ ան Երուսաղէմի Հայոց վանքին մէջ և որուն Ժամանակաւոր Վարժարանէն ներս ստացաւ իր կրթութիւնը:

Շորհիւ իր բնատուր տաղանդին, ան գրաւեց ուշագրութիւնը իր բալոր դասատուներուն, իրուսուցիչները Եղիշէ Պատրիարք Դուռիւ և Թորգոն Պատրիարք Գուշակեան, ինչպէս նաև Յակոբ Օշական և Շահնան Պէրպէրեան, ճանչցան իր մէջ ապագայ մնձ առաջնորդն ու եկեղեցականը, բանաստեղծն ու մտաւորականը:

Հայոց Եկեղեցին Հայ ժողովուրդի հոգեկան հարստութեանց ամրակուռ բերդն է, և ինք այդ բերդին նուրիբեալ զինուարը եղաւ, իր վաղ պատասխութեանէն մինչև իր մտնը:

Աւելի քան քսան տարիներ ան վարեց Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի տեսչութիւնը, Հայ ժողովուրդի Ազգային Պատմութեան և Եկեղեցական Պատմութեան տիպար դասատուն եղաւ և սերանդներ գաստիարակեց:

Ամէն կոզմ են իր աշակերտները: Անոնց մէջ կան զրոյներ, ուսուցիչներ, խմբագիրներ, հոգեգորականներ, ժամանականներ և համեստ ազգայիններ:

Շուրջ զարդուն տարիներ ծառայեց ան Հայաստանեայց Եկեղեցւոյ և Երուսաղէմի Ս. Աթոռին:

Ս. Յակոբեանց Առաքելական Աթոռը Ս. Տեղեաց մէջ իր ունեցած իրաւունքներով (Յոյն և Կոթուրիկ աշխարհի հետ համահաւասար գիրքով մը) կը կազմէ փառքն ու պատիւը Հայ Եկեղեցւոյ և Հայ ժողովուրդին: